600.0094.26.12.03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2003 թվականի №94Ա
ք. Երևան

ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԻՋՀԱՄԱՏԻՐԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի ա) կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» №1Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. 2003-2004 թվականների ձմռան ժամանակաշրջանում Հրազդանի քաղաքային համայնքի «Միջհամատիրական սպասարկման վարչություն» փակ բաժնետրական ընկերության կողմից իրականացվող կենտրոնացված ջեռուցման համար սահմանել՝

1.1. ջեռուցման սակագները (ներառյալ ավելացված արժեքի հարկը)՝

ա) բնակչության համար՝ 1667 դր/մ^2 (հաշվառքի սարքերի բացակայության դեպքում) 2006 դր/ԳՋ

բ) այլ սպառողների համար՝ 2006դր/ԳՋ

1.2. ջեռուցման ժամանակաշրջանի տևողությունը՝ 120 օր.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2004 թվականի հունվարի 26-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
26 դեկտեմբերի 2003թ.